

ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԵՐԼԻՆԳՐԱԾԻՑ

Հ. ԱՆՃԱՆՅԱՆ

ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒՋԱՆԴԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՌՈՒՍԵՐԵՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայկական ՍՍՌԻ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտը նախաձեռնել է ուսերեն թարգմանությունը լույս ընծայելու «Հայկական հին գրականության հաշարձաններ» մատենաշարը, որի նպատակն է մեր անցյալի գրավոր կարևոր հիշատակարանները դարձնել սովետական գիտական լայն հասարակայնության ակադեմիկոսները։ Այս մատենաշարի Ա հատորը, որն արդեն լույս է տեսել, կազմում է Փավստոս Բուզանդի հայոց պատմությունը՝ Մ. Բուրդյանի թարգմանությամբ ու ծանոթագրություններով։ Երբի պատ. խմբագիրն է Ս. Երևմյանը, իսկ ակադեմիայի խմբագիրը՝ Ե. Տեր-Մինասյանը։

Փավստոս Բուզանդի անունով ծանոթ հայոց պատմությունը, որ կոչվում է «Բուզանդարան», հայկական մատենագրության վաղագույն շրջանի նմուշներից մեկն է։ Նա տալիս է Արշակունյաց թագավորության անկման շրջանը՝ բնագրիկով IV դարի գեղքերը խոսքով II հոտակից մինչև Հայաստանի բաժանումը Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև՝ Որբևս պատմական թանկարժեք՝ սկզբնաղբյուր՝ Բուզանդարանը գիտնականների ուշադրության առարկա է եղել հատկապես անցյալ դարի երկրորդ կեսից և այսօր Փավստոսի հայոց պատմության վերաբերող ուսումնասիրությունները պատկանելի թիվ են կազմում։

Սովետական բանասիրությունը ետ, ի թիվս հայկական մատենագրության խոշորագույն ներկայացուցիչների, Փավստոսի հայոց պատմությունը դարձրել է ուշադրության առարկա, որի արտահայտությունն է Ս. Մալխասյանցի կողմից Բուզանդարանի աշխարհարար թարգմանության հրատարակությունը 1947 թվականին՝ բնագրձակ ուսումնասիրությամբ, որակյա մեթոդով և փավստոսագիտության ավելի քան հարյուրամյա հետազոտությունների նվաճումները²։ Մալխասյանցի այս կարևոր ձեռնարկությունը խթան է հանդիսացել ուսերեն ներկա թարգմանության հրատարակությունը՝ Փավստոսի պատմության ուսումնասիրման համար անհրաժեշտ առավել լայն ասպարեզ։

Նկատի ունենալով, որ այս հրատարակությունը աղբյուրագիտական նշանակություն ունի, մենք ցանկանում ենք այն քննության առնել մի-

¹ История Армении Фавстоса Бузанда. Перевод с древнеармянского и комментарии М. А. Геворкяна; под редакцией С. Т. Еремиана; вступительная статья Л. С. Хачикяна. (— Академия наук Армянской ССР. Институт истории. Памятники древнеармянской литературы. I. Издательство Академии наук Армянской ССР, Ереван, 1953).

² Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Թարգմանություն, Ներածություն և ծանոթագրություններ ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի, Երևան, 1947։

այն թարգմանական և թարգմանություն հետ կապված խնդիրների տեսանկյունից: Առաջարկում է. Խաչիկյանն իր առաջ խնդիր է դրել ամենատեղի շարադրանքով բնթերցողին ծանոթացնել Փափստոսի անձնավորության և նրա պատմության գրության հանգամանքների մասին բանասիրության մեջ դոյություն ունեցող ամենահիմնական կարծիքների հետ և այդ խնդիրը կատարել է հաջողությամբ:

Ինչ խոսք, թարգմանությունն ունի առաջնություններ, որոնց մասին պետք է խոսել:

Մ. Գևորգյանը, օգտվելով ուսական լեզվի տոնիկ արտահայտությունների և սճերի ճոխությունից, կարողացել է արտակարգ ճկունությամբ փոխադրել Փափստոս հեղինակի գրչի տակ հանդես եկող նկարագրությունների կենդանությունն ու աշխուժությունը, արտահայտչական այն հատկությունները, որ Բուզանդարանի հեղինակը ձեռք է բերել իր օգտագործած ժողովրդական աղբյուրներից և նույնիսկ ժողովրդից: Մ. Բեփորգյանն իր թարգմանությամբ շատ հաջող կերպով ավել է բնագրի գեղարվեստականությունը, կարողացել է հաճախ մեծ չափով տալ բնագրի ճշգրտությունը: Սակայն այս թարգմանությունն ունի նաև թերություններ, որոնց մասին պետք է նույնպես խոսել:

Նպատակ չունենալով այս թարգմանությունն ամբողջապես քննություն տանել, կանգ ենք առնում միայն մի քանի աչքի բնկնող կետերի վրա: Դիտողությունների համար օգտագործում ենք Փափստոսի վենետիկյան 1832 թվականի հրատարակությունը, որից Մ. Գևորգյանը կատարել է իր թարգմանությունը, ինչպես ինքն է ասում:

Մենք գտնում ենք, որ բնագրին տրված «Повести Бузанда» վերնագիրը թեև Վուզանդարան պատմությունը-ի ճշգրիտ թարգմանությունը չէ, բայց, բնահանուր կերպով միայն, արտահայտում է նրա բովանդակությունը: Այստեղ, իհարկե, повесть բառը օգտագործված է ոչ թե նրա ունեցած այժմյան՝ գեղարվեստական գրականության հատուկ պատմվածք իմաստով, այլ բոլոր հին առման պատմություն իմաստով, որով «Повести Бузанда»-ն համեմատելի է պատմական գրականության մեջ հայտնի «Повесть временных лет» անվան հետ, որը տրվում է ուսական տարեգրական ժողովածուներից հնագույնին. սակայն «Повести Бузанда»-ն ենթադրել է տալիս հայերենում Բուզանդալան (Բուզանդի) պատմություններ, որեւիս ստացվում է այն, որ մեր թարգմանիչը Վուզանդարան պատմությունը հասկանում է որպես Վուզանդական պատմություն, իսկ այս ճիշտ չէ: Ճիշտ չէ Բուզանդարան-ը հասկանալ որպես Բուզանդալան (աժ.) կամ Բուզանդի (սեռ. հոլով): Վուզանդարան պատմությունը-ը պետք է հասկանալ որպես պատմությունների կամ պատմական գլուխների մի շարք կամ մի ամբողջություն, որը կոչվում է Բուզանդալան: Իսկ ինչ է նշանակում Բուզանդարան: Այս անունը հեղինակը կերտել է իր անունով՝ Բուզանդ-ով և բան մասնիկով, մի մասնիկ, որ նա շատ է սիրում և նրանով ինքնատիպ բառեր կերտում. այսպես՝ մենք Փափստոսի գրչի տակ ունենք ինքնատիպ մարգարէարան (7) և առաքելարան (անդ) բառերը, որոնք ցրիշ մատենագիրների մոտ չեն պատահում. Փափստոսի տարրեր մասերում նույն մարգարէարան-ի փոխարեն գտնում ենք նաև մարգարէանոց (36,44) կերտումը, որը կասկած չի թողնում, որ մարգարէարան-ը Փայս-

տոսի բնագրում գրչական սխալ չէ, օրինակ՝ մարգարէական-ի փոխարեն: Այսպէս է նաև Բուզանդարան-ը, Փափստոսը մարգարէարան և առաքելարան անունն է տալիս այն մատուռներին, որտեղ ամփոփված էին մի որեւէ մարդարեւի կամ առաքյալի հիշատակները, այսինքն՝ մարգարէ կամ առաքյալ լովանդակող մատուռներին. և հենց այսպէս էլ պետք է հասկանալ նաև Բուզանդարան-ը, որը նշանակում է Բուզանդի գրածները լովանդակող կամ Բուզանդը լովանդակող գիրք, Բուզանդի գիրք, Բուզանդ-գիրք: Այս վերջին ձևով անուններ ունենք մեր մատենագրության մեջ՝ Սարգիս-գիրք¹, Վարդան-գիրք², և այլն:

Անցնենք Փափստոսի բնագրին:

Ինչպե՞ս պարանի «Խոստարանության» առաջին տողերն են՝ «Այս ինչ է ի գպրութիւնս երրորդ՝ պատմութեանցս՝ ժամանակագիր կանոնք մատենից, և առ նմին գպրութիւնք երեք» (էջ 1)³: Ռուսերենում կարդում ենք. «Эта третья книга повестей содержит главы исторических писаний, и к ней приобщаются еще три книги» (3).

Այս թարգմանությունը, որ չի համապատասխանում բնագրին, կատարվել է ոչ թե գրարար բնագրից, այլ Ս. Մալխասյանի աշխարհարար թարգմանությունից, բառ առ բառ (հմտ. Մալխ. 83):

Նախ այս նախադասության առաջին բառերը պետք է թարգմանվեն այսպէս. «Ահա ինչ որ կա այս երրորդ գպրության մեջ». իսկ «պատմութեանցս»-ը նշանակում է «մեր պատմություններին», որով՝ «Ահա ինչ որ կա մեր պատմությունների այս երրորդ գպրության մեջ»: Բսկ ուր է մնացել «ժամանակագիր կանոնք մատենից»-ը: Իսկ Մալխասյանի և Գևորգյանի մոտ դարձել է «պատմական գրվածքների գլուխներ», բայց ի դուրս նախ նշենք, որ Փափստոսի մոտ այս արտահայտությունը դործածվում է 6 անգամ ևս, տարբեր տեղերում. «կանոնք ժամանակագիր մատենից» (5, 259), «ժամանակագիր կանոնք» (58), «կանոնք ժամանակագիրք մատենից» (65, 185), «կանոն ժամանակագիր մատենից» (181). իսկ բոլոր տեղերում Մ. Գևորգյանը, Ս. Մալխասյանցի հետևողությամբ, թարգմանել է «исторические главы» (7, 199), «главы повестей» (47), «исторические повести» (49, 139) և «главы истории» (143):

Իայց ինչ է նշանակում «ժամանակագիր կանոնք»: Այս արտահայտությունը հազվապես է մեր մատենագրության մեջ: Առաջին անգամ մենք այդ գտնում ենք Եվսերիոս Կեսարացու ժամանակագրության հայերեն թարգմանության մեջ⁴: Եվսերիոսի ժամանակագրությունը բաղկացած է երկու հատորներից, որոնցից Ա-ն, որ պատմական անցքերի շա-

¹ Հմտ. Հ. Տաւրան, Յուդակ հայերէն ձեռագրաց մատենագրարանին Մխթարեանցի վիճենա, Վիճենա, 1895, էջ 750:

² Հմտ. Երեանի Պետական Մատենագրարանի ձեռ. № 6273, էջ 454—455:

³ Բնագրի կետագրությունը մենք ենք փոխել:

⁴ Եվսերիոս Կեսարացու ժամանակագրության հունարեն սկզբնաղբիւրը կորած է: Նրանից մնացել է միայն մի անհրաղատ քաղվածք, որտեղ Ա մասը բոլորովին թերի է: ԺԸ դարի վերջերում գտնվեց այս ժամանակագրության հայերեն ամբողջական թարգմանությունը, որը և հետո հրատարակվեց նրա լատիներեն թարգմանության հետ միասին. «Եվսերի Պամփիլեայ Կեսարացու ժամանակագիրք երկմասնայն», Չ հատորով, Վենետիկ, 1818: Բնագրի լատիներեն թարգմանությունը և առաջարանը Մկ. Ավդերյանից են:

րազրանքն է, կոչվում է «Χρονολογία» (Տարեգրություն), իսկ Բ-ն, որ միայն ցուցակներ և աղյուսակներ է պարունակում, «Χρονολόγος κανών» (Ժամանակական կանոն)։ Այս ժամանակագրության հայերեն թարգմանություն մեջ, որից միայն մեկ ձեռագիր օրինակ է հայտնի մինչև այժմ¹, Ա հատորը վերնագիր չունի, իսկ Բ հատորն այսպես է խորագրված. «Եւսերի Պամփիլեայ Կեսարացոյ Քրոնիկոն կանոն, որ և ժամանակական կանոնք»։ Բայց մեզ առհասարակ հայտնի է, որ, ինչպես նշեցինք, Ա մասը «Քրոնիկոն կանոն» կամ «Ժամանակական կանոն» չէր կոչվում։ Հեղինակն ինքը Ա հատորի առաջարանում համառոտակի թվարկելով այն նյութերը, որոնք մտնում են այդ հատորի մեջ, հաջորդ՝ Բ հատորի մասին գրում է. «Եւ նիւթս ի նոցանէ (Ա հատորի նյութերից) ամենեցունց ժողովեալ անձին՝ ի քրոնիկոն ժամանակական կանոնսն փոխեցայց»²։ Սրանով պարզ է, որ «Քրոնիկոն կանոն» կամ «Ժամանակական կանոն» անունը իսկապես վերաբերում է միայն Բ հատորին, որը աղյուսակներ է պարունակում, և դա հենց հասկանալի է, եթե նկատի ունենանք, որ հունարեն κανών (կանոն) բառը արմատակից է καλνγi «եղեգ» բառի հետ, իսկ եղեգներով կամ նրանց փոխարենով գաղազաններով կազմվում են աղյուսակները։ Սակայն, բաց երևույթին, հետագայում, գուցէ և այն բանի հետեանքով, որ հունական մատենագրության մեջ անհետ կորել էր նվազագույն Ա հատորը և կամ հունարեն բնագրում եւ, ինչպես հայերենում, վերնագիր չէր ունեցել նա, բնորոշվել է Բ հատորի նման և նրա հետեղությունամբ անվանել Ա-ն էլ, ինչպես այդ երևում է բանասիրության մեջ տեղ գտած անվանակոչությունից, բայց որում Ա-ն անվանվում է Chroniconum canonum liber prior (Ժամանակական կանոնաց գիրք Ա), իսկ երկրորդը՝ Chroniconum canonum liber posterior (Ժամանակական կանոնաց գիրք Բ)³։ Ուրեմն՝ «Ժամանակական կանոնք»-ը պետք է նշանակած լինի նաև պարզապես ժամանակագրություն։ Մեր այս կարծիքը, թվում է, հաստատվում է նրանով, որ հունարեն լեզվի մեջ եւ պատահում է χρονολογος κανόνες-ը (Ժամանակական կանոնք) պարզապես ժամանակագրություն առումով, համեմատաբար ուշ ժամանակի գրականության մեջ⁴։

Հայ մատենագրության մեջ «Ժամանակական կանոն»-ին պատահում ենք նաև Անանիա Շիրակացու մոտ և խնդիրը մեզ համար դառնում է ավելի պարզ։

Անանիա Շիրակացին իր Զատիկի ճառում գրում է. «Եւ արար Յեսու ի իւ աւր ամսոյն առաջնոյ զատիկ, բայց անուանէ ի չորեքտասան, բայց աւուրցն լուսնի. և առնէ նորոգումն կարգացն եղծելոց յանապատին. և առնէ իրրե ի նորոգ սկիզբն կարգաց և աւրինաց որպէս և Մովսէս յերանելն յնգիպտոսէ. քանզի և զանցանելն զՅորդանան գետով՝ ելա կոչէ յնգիպտոսէ։ Որպէս և ի ժամանակական կանոնի նախապատում հանդիսին մերոյ ճառեցաք»⁵։

¹ Այն միակ ձեռագիրը, որից կառարված է հիշյալ հրատարակությունը, այժմ գտնվում է Հայաստանում, Երևանի Պետական Մատենադարանի ձեռ. № 1804։

² «Եւսերի Պամփիլեայ Կեսարացոյ ժամանակականք երկմասնեայ», հա. Ա, էջ 5։

³ Հմմտ. Մկ. Ավդերյանի առաջարանը, անդ, էջ XIV—XVI։

⁴ Հմմտ. А. Д. Веисман, Греческо-русский словарь, С.—Петербург, 1894, стр. 660.

⁵ «Անանիայի Շիրակացոյ համարողի մատենագրությունք», հրատ. պրոֆ. Ա. Գ. Արքաճամյանի, Երևան, 1933, էջ 204։

Անանիա Շիրակացին այստեղ ասում է, որ ինքր Հորդանանի անցման մասին արգեն գրել է իր «Ժամանակական կանոն»-ում, իսկ որը նկատի ունի Անանիա Շիրակացին իր աշխատությունների մեջ «Ժամանակական կանոն» անունով: Դա հենց այն հայտնի ժամանակագրությունն է, որ առաջին անգամ Վենետիկի Մխիթարյանները հրատարակեցին 1904 թվականին «Անանուն ժամանակագրություն խմբագիր յօրինակ յ'է. դարու ի հնագույն ժամանակագրաց» անունով և որ վերջին տարիներս պրոֆ. Ա. Մ. Արրահամյանը կրկին հրատարակեց Անանիա Շիրակացու երկերի շարքում: Եվ, իրոք, այս ժամանակագրության մեջ խոսվում է Հորդանանի անցման մասին. «Յեռու որդի Նաեայ իրբն անց ընդ Յորդանան գետ, եկաց յերկրին Քանանացոց ամս քսան և եւթն» և այլ¹:

Այստեղից երևում է, որ Անանիա Շիրակացին իր կազմած ժամանակագրությունն անվանում էր «Ժամանակական կանոն»: Այստեղ, ի միջի այլոց, նշենք, որ Բարս. Սարգիսյանը, Ստ. Մալխասյանը, Աշ. Արրահամյանը և ուրիշներ «Անանուն ժամանակագրություն» հեղինակությունը վերագրում էին Անանիա Շիրակացուն՝ հենվելով միայն կողմնակի բնույթ կրող փաստարկումների վրա. այդ մասին ուղղակի փաստ ծանոթ չէր մինչև այժմ: Մեր բերած այս ուղղակի փաստով այլևս անվիճելիորեն հաստատվում է, որ 1) «Անանուն» ժամանակագրությունը (իսկական անունով՝ «Ժամանակական կանոն»), իրոք, Անանիա Շիրակացու հեղինակությունն է և 2) այդ ժամանակագրությունը գրված է եղել Զատիկի ճառից առաջ:

Գալով մեր խնդրին՝ այլևս պարզ է, որ Բուզանդարանում քանիցս կրկնվող «Ժամանակագիր կանոն» մատենից»-ը նշանակում է ժամանակագրություն կամ քրոնիկոն: Բուզանդարանի առաջարանի այն հատվածում, որի մասին մենք խոսում ենք, «Ժամանակագիր կանոն» մատենից»-ը հաջորդում է «պատմութեանց» բառին՝ որպես նրա բացահայտիչը, որով տվյալ հատվածի ճիշտ թարգմանությունը կլինի այսպես. «Ահա ինչ որ կամեր պատմությունների, այսինքն՝ ժամանակագրության, այս երբորդ պարություն մեջ, և նրան (երբորդ պարության) կից կան (ուրիշ) երեք պարություններ»:

Սակայն այս ճշտման նշանակությունը միայն ճշգրիտ թարգմանության համար չէ. կա ավելի կարևորը: Անանիա Շիրակացին, որն իր աղբյուրների շարքում օգտվել է և Եվսեբիոսի ժամանակագրության հայերեն թարգմանությունից, նրա աղբյուրությունում էլ իր կազմած ժամանակագրությունն անվանել է «Ժամանակական կանոն»: Այս «Ժամանակագիր կանոն» մատենից» արտահայտությունը նույն աղբյուրությունը ցույց չի տալիս արդյոք Բուզանդարանի վրա ևս: Բանասիրության մեջ նշվել է, որ Փավստոս հեղինակը օգտվել է Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմության» հայերեն թարգմանությունից, Պետք է հետազոտել նաև այն, թե արդյոք Եվսեբիոսի ժամանակագրության հետքեր ևս չկան Բուզանդարանի այժմյան բնագրում որևէ չափով, մի բան, որ հնարավոր է, քանի որ այդ ժամանակագրությունը և պարունակ է թարգմանվել և նրանից օգտվել են

¹ «Անանիայի Շիրակացու համարողի մատենագրություն», էջ 365:

Մովսես Խորենացին ու Հագար Փարպեցին՝ Սակայն կանխապես կարելի է ասել, որ եթե նույնիսկ չհայտնաբերվեն այդպիսի հետքեր Բուզանդարանի բնագրում, դա ոչ մի ժխտական նշանակություն ունենալ չի կարող մեր այն կարծիքի տեսակետից, թե «ժամանակագիր կանոնք մատենից» արտահայտությունը Եվսեբիոսի ժամանակագրության հայերեն թարգմանությունից է գալիս, նկատի ունենալով, որ այս արտահայտությունը, որ 7-անգամ է պատահում Բուզանդարանում, բոլոր դեպքերումն էլ գտնվում է Բուզանդարանի հավելվածական մասերում միայն («Պատարանութիւն նախագիտելի», «պրությունների ցանկերը և գլուխները, Գ պրության վերջի հիշատակագրությունը»): Իսկ Ս. Մովսեսյանը համոզիչ կերպով ցույց է տալիս, որ այդ մասերը Բուզանդարանի ոչ թե հեղինակի, այլ խմբագրի գրչին են պատկանում: Այս դեպքում պետք է որոնել այն կապը, որը կարող է գոյություն ունենալ Բուզանդարանի խմբագրի և Եվսեբիոսի ժամանակագրության թարգմանչի միջև:

Շարունակենք հետևել ոտուկներն թարգմանությունը:

Գ պր. Գ գլխում Փափստոսը խոսում է այն ուխտագնացության մասին, որ Վրթանեսը կատարել էր գեղի Աշտիշատ, Տարոնի նշանավոր սրբափայլը: Այստեղ կարդում ենք. «Սա (Վրթանեսը) երթեալ կատարէր անդ, բառ հանապաղ սովորութեանն, զտեառնն զխաչական զփրկութեանն զպատարագն դոնութեան, զհաղորդութիւն չարչարանաց յիշատակի, զկենդանաբարն և զպատիշն զմարմին և զարիւն աստուածորդւոյն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» (7): Թարգմանված է՝ «Прибыв туда, он совершил, как это имел обыкновение делать всегда, благодарственное жертвоприношение, подобно тому, как совершил господь на кресте для нашего спасения и в память страстей (господних) приобрелся живительного и спасительного тела и крови божьего сына господа нашего Иисуса Христа» (8).

Ինչպես տեսնում ենք՝ մեր թարգմանիչը գեղի Տարոն ուխտի գնալու սովորությունը վերագրում է Վրթանեսի անձին, մինչդեռ Փափստոսի մոտ այդ սովորության հաստատումը Վրթանեսի նախորդներին է վերաբերում, ինչպես այդ շատ պարզ կերպով երևում է այն խոսքերից, որոնք վերոհիշյալ նախադասության անմիջական շարունակությունն են կազմում. «Քանզի այնպէս իսկ սովոր էին եպիսկոպոսապետքն Հայոց, հանգերձ թագաւորօրն և մեծամեծօրն, նախարարօրն և աշխարհախումբ րազմութեամբ պատուել զնոյն տեղիս, որ յառաջ էին տեղիք պատկերաց կոոցն, և ապա յանուն աստուածութեանն սրբեցան, և եղևն տուն աղօթից և տեղի ուխտից ամենայն ումեք» (7): Այսպես, ուրեմն, Վրթանեսը այդ ուխտագնացությունը կատարում էր ոչ թե իր սովորության համաձայն, ինչպես գրել է մեր թարգմանիչը, այլ պարզապես՝ Վեղսի մշտական սովորության համաձայն, սովորություն, որը նրա նախորդներից էր գալիս, նույն սխալը կոչում է Ս. Մովսեսյանի, ինչպես և ուրիշ թարգմանիչների մոտ:

Այնուհետև մեր թարգմանիչը Վրթանեսին Աշտիշատում, որպես ուխտի առարկայական արտահայտություն, զոհաբերություն է անել տալիս (жертвоприношение). այլ խոսքով՝ անասուն մորթել կամ մատաղ անել:

¹ Տե՛ս Փափստոսի Պատմության աշխարհարար թարգմանության առաջաբանում, էջ 24:

և այդ զոհարերությունը, նրա սարքած խոսքերով, էր ճեման այն զոհարերության, որ տերը կատարեց խաչի վրա՝ մեր փրկության համար, մինչդեռ Փափստոսը այդպիսի բաներ չի ասում: Նա խոսում է ոչ թե անասունի անցնող զոհ — պատարագի (жертвоприношение) մասին, այլ անարյուն պատարագի (литургия) մասին. Փափստոսը ասում է, որ Վրթանեսը զատարում էր (մատուցում էր) տէրունական, խաչական (խաչի), փրկական պատարագը՝ զոհության պատարագը: Հմմտ. Ագաթանգեղոսը՝ «Եւ մատուցանէր զպատարագն փրկութեան», «Եւ անդ մատուցանէր զօրհնութեան պատարագն»:

Բայց որտեղից է առաջացել բնագրի այս ազավազումը ուսուցիչ թարգմանության մեջ: Դա դալիս է Մ. Էմինի ֆրանսերեն թարգմանության սխալ հասկացումից: Մ. Էմինը այս հատվածը ոչ բառացի, բայց ճիշտ կերպով, թարգմանել է այսպես. «Il se preparait... à renouveler le sacrifice que le Seigneur avait offert sur la croix pour notre salut» (211)², այսինքն՝ «Պատրաստվում էր նորոգել (կրկնել) այն զոհարերությունը, որ տերը կատարել էր խաչի վրա՝ մեր փրկության համար»: Այս թարգմանությունը ճիշտ է, որովհետեւ խոսում է հենց անարյուն պատարագի մասին, որը, իրոք, համարվում էր խաչի վրա կատարված զոհարերության նորոգումը, կրկնումը, վերակատարումը. սակայն Մ. Գևորգյանը անտեսելով այստեղ ֆրանսերեն գարծավածքի նրբությունը՝ շուտ է ավել նրա իմաստը, ազավազելով Փափստոսի միտքը:

Փափստոսը քիչ հետո Վրթանեսի հետ պատահած ուրիշ դեպքերի մասին պատմելիս երկու անգամ ևս կրկնում է նույն զատարել պատարագ՝ արտահայտությունը. «Երթեալ շրջէր առանձին սակաւութ, կատարել զպատարագն օրհնութեան» (7) և «մինչդեռ նա ի ներքս մտեալ՝ զպատարագն կատարէր» (8): Հետաքրքիրն այն է, որ մեր թարգմանիչը այս վերջին երկու դեպքերում զատարել պատարագ-ը, ճիշտ է հասկանում ու թարգմանում է «служить литургию», առանց անգրագատնալու, որ քիչ առաջ այդ բառերին ինքը ավել էր բոլորովին տարբեր նշանակություն:

Շարունակելով նույն տեղում հետևել Մ. Էմինի թարգմանությանը՝ Մ. Գևորգյանը կատարում է մի այլ սխալ: Մ. Էմինը գրում է. «Et communier en souvenir de la Passion» և այլն (211): Ֆրանսերենում communier բայը և՛ ներգործական է, և՛ չեղոք, նշանակում է և՛ հաղորդել, հաղորդություն տալ, և՛ հաղորդվել, հաղորդություն ընդունել: Էմինի թարգմանությունը ճիշտ կերպով ասում է, որ Վրթանեսը, պատարագ մատուցելով, ժողովրդին հաղորդեց, այսինքն՝ հաղորդություն տվեց. իսկ Մ. Գևորգյանի մոտ ֆրանսերեն communier բառի սխալ հասկացման հետևանքով ստացվել է այն, որ Վրթանեսը ինքն է հաղորդություն ընդունել (принимал): Հմմտ. Ագաթանգեղոսը՝ «Երաշխէր անդ զմարմին և զարիւն կենարարին Քրիստոսի» և հաղորդէր զամենեւեան ի խորհուրդ զօրհնութեան. բաշխէր ամենեցուն զսուրբ մարմինն և զպատուական արիւնն ամենափրկչին՝ Իրիստոսի, զկենդանարարն և զկեցուցիչն ամենայն մարդկան»³:

¹ «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1909, էջ 423 և 434:

² See V. Langlois, Collection, t. I, Paris, 1867.

³ «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», էջ 423 և 434—435:

Փափատոսը շարունակելով պատմել Աշտիշատի ուխտագնացութեան սովորութեան մասին, ավելացնում է. «Մանավանդ յայն ի գլխաւոր տեղին եկեղեցին ժողովել ի յիշատակ սրբոցն՝ որ էին անդ, կատարել անդ ամի ամի եւթն անգամ» (7)։ Ի՞նչպէս է թարգմանված. «В особенности имели обыкновение собираться в той главной церкви и там совершать поминание покоящихся там святых ежегодно седьмого числа месяца Сахми» (8—9).

Նախ ասենք, որ այս հատվածը տառացի Ս. Մալխասյանից է թարգմանված (հմմտ. Մալխ. 88)։ Ազաթանգեղոսի մոտ մի նման նկարագրութեան մեջ գրված է. «Եւ հրամայեաց կատարել անդ ամ յամէ... որ օր եօթն էր ամսոյն սահմի»։ Մալխասյանը, հետեւելով Նորայր Բյուզանդացուն, բնագուէն է, որ «Փափատոս անշուշտ նկատի ունի Ազաթանգեղոսի այս վկայութեանը, բայց սրի և պետք է ուղղել նրա մեջ մտած ազգավազութեանը և ուղղել է, տալով համապատասխան ծանոթագրութեան (Մալխ. 311)։ Եթե ուսերենի թարգմանիչը ևս ծանոթագրութեան տված լիներ այս մասին, դուք մենք որոշ արդարացում գտնեինք նրա համար, բայց նա փոփոխութեանը թողնելով առանց ծանոթագրութեան՝ փաստորեն ազգավազել է բնագիրը, քանի որ Բյուզանդարանի բնագրում այդպիսի բան չկա։ Սակայն եթե մի փոքր միջամուխ լինենք բնագրի քննութեանը, կտեսնենք, որ Ս. Մալխասյանի ծանոթագրված սրբագրութեանն էլ արդեն բնագրի կոպիտ ազգավազում է։ Սուրբ Աշտիշատի մայր-եկեղեցու մասին է։ Հաշվի առնելով այն, որ այստեղ Փափատոսի տված նկարագրութեանը իրոք համընթանում է Ազաթանգեղոսի 814 և 815 գլուխների պարունակած նկարագրութեանների հետ, կարելի էր բնագուէն, որ այստեղ Փափատոսը հետևած լինի Ազաթանգեղոսին, հետևաբար Փափատոսի բնթերցվածը ազգավազված համարել։ Սակայն Փափատոսի մոտ նկարագրութեան շարունակութեանը արդեն կասկած չի թողնում, որ «եւթն անգամ» և «եօթն էր ամսոյն սահմի» նմանութեանը լոկ պատահական է, որովհետեւ Փափատոսի խոսքերից պարզ կերպով երևում է, որ Աշտիշատում կային մեկից ավելի ուխտատեղիներ և այնտեղ կատարվում էին մեկից ավելի տարեկան տոնավաճառութեաններ, որոնցից ամենագլխավորը կատարվում էր Հովհաննէս Մկրտչի մատուցում։ Փափատոսը տարեկան յոթն անգամ կատարվող տոնավաճառութեանների մասին ասելուց հետո անմիջապէս ավելացնում է. «Որք զնոյն ունէին սովորութիւն առաւել ևս ի մեծի մարգարէարան մատրանն Յովհաննու» (7). ապա նորից է շարունակում. «Սոյնպէս և յառաքելարանս տեառնաշակերտացն» (անդ), այսինքն՝ առաքյալներին նվիրված մատուցանելում. և հետո՝ դարձյալ. «Սոյնպէս և ի վկայարանս մարտիրոսացն ամի ամի ժողովեալք, զօր աօնին յիշատակի նոցա վարուց գործոց կենաց քաջութեան խմբեալ ցնծային» (անդ)։ Այլևս կասկած չի կարող լինել, որ Աշտիշատի մայր-եկեղեցին ուներ բազմաթիվ մատուցներ, որոնց մեջ տոնակատարութեան համար մարդիկ ստանձնում յոթն անգամ համաքվում էին, հետևաբար անտեղի է ազգավազված համարել Փափատոսի «ամի ամի եւթն անգամ»-ը և սրբագրել Ազաթանգեղոսի։

Պանդ տոնենք նաև հաջորդ նախապատմութեան վրա, որ հիշեցինք և

վերահսկում. «Որք զնոյն ունէին սովորութիւն առաւել ևս ի մեծի մարգարէարան մատրանն Յովհաննու» (անդ): Թարգմանովի է՝ «Имели обыкновение собираться... более всего в часовне великого пророка Иоанна» (8—9).

Այս թարգմանութիւնը ևս, հերթականորեն, Ս. Մալխասյանցից է. «Սովորութիւն ունէին ժողովիլ... Հովհաննէս մեծ մարգարեի մատուռում» (88): Սխալ է: Փալստոսը Հովհաննէս Մկրտչին մարգարէ չի անվանում, բայց թարգմանիչներին շփոթեցրել է մարգարէարանը, որ Փալստոսը հատկապէս կերտել է այստեղ մարգարէ բառից այն հաշիւով, որ Հովհաննէսը Նոր-Կտակարանում մարգարեի համբաւ է ունեցել: Նման ձևով է կերտել Փալստոսը նաև առաքելարանը, որ հաջորդ տողում է գտնւում: Մարգարէարանը-ը այստեղ ավելագրութիւն է մատուռն բառի վերաբերմամբ: Այս ավելագրութեան փաստը արտակարգ երևույթ չէ Փալստոսի մոտ, օրինակ՝ «զահերէց բարձերէց տաճարին արքունի» (21), «իւրոյ արքայութեանն զմեզ բազորդս բաժանորդս առնէ» (92), և այլն, այնպէս որ հիշյալ նախագասութեան մեջ անտեղի է մարգարէարան բառի վերջավորութիւնը ջնջել և բառը որպէս մարգարէ տեղափոխել հատուկ անվան մոտ: Այդպիսի տեղափոխում կատարելով թարգմանիչները գործել են մի ուրիշ սխալ ևս՝ մեծ ածականը տվել են Հովհաննէսին, այնինչ նա գրաւար բնադրում պատկանում է մարգարեարանին և հենց դրա համար է, որ Փալստոսը շեշտում է, թե տոնակատարութիւնները «առաւել ևս» փայլով էին կատարւում այնտեղ: Այս նախագասութիւնը պետք էր աշխարհաբարում թարգմանել այսպէս. «Որոնք (հավաքվելու) այդ սովորութիւնը ունին առանձնապէս Հովհաննէսի մեծ մարգարեարան-մատուռում». իսկ ողուերենում՝ այսպէս. «Которые имели то обыкновение (собираться) более всего в великой пророческой часовне Иоанна». ողուական ձևը մենք ողուերեն լեզվի հարմարութեան տեսակետից ենք առաջարկում, և ոչ թե նրա համար, որ մարգարէարանը-ը նշանակում է մարգարէական:

Մատնանշվող այս սխալը մեր թարգմանիչը կրկնել է ուրիշ երկու տեղ ևս. «Մարգարէանոցն Յովհաննու» (36), Церковь во имя пророка Иоанна» (31). «Ի մեծէ մարգարէանոցէն Յովհաննու» (44), «Из церкви во имя великого Иоанна» (37). Այս վերջին օրինակների մեջ կա մի ուրիշ սխալ ևս: Մարգարէարանը-ը կամ մարգարէանոցը-ը մենք տեսանք, որ մատուռ է, բայց այստեղ թարգմանված է եկեղեցի (церковь). այսպէս է արվել նաև մի ուրիշ տեղ՝ «Ի յազարակն մեծի մարգարէանոցին Յովհաննու» (44), «В агарак великой церкви во имя Иоанна» (37). այսպէս նաև վկայարան բառը՝ «Ի վկայարանս մարտիրոսացն» (7), «В церквах во имя мучеников» (9). Թե մարգարէարանը-ը, վկայարանը-ը և առաքելարանը-ը եկեղեցիներ չէին, այլ մատուռներ, երևում է նաև հենց Փալստոսի տված այն տեղեկութիւններից, թե սրանք բոլորը գտնւում էին «ի մեծն յառաջին ի մայրն եկեղեցեացն Հայոց, որ էր յերկրին Տարօնու» (7), «այսին ի զլսաւոր տեղին եկեղեցին» (անդ), այսինքն Աշտիշատի մայր-եկեղեցու մեջ: Անցնենք ուրիշ կետերի:

Ե դպր. Դ գլխում Փալստոսը գրում է. «Բայց ապա ամբաստան լինէին քսութեամբ առ մեծ թագաւորն Պապայ զգորավարէն Մուշեղի, և ասէին՝ թէ Գիտեալ, արքայ, զի մեծաւ նենգութեամբ է ընդ քեզ, և քեզ մահու սպասէ» (198—199): Թարգմանված է՝ «Но вот долго Свеклыагիր 12—7

оклеветали полководца Мушега перед великим царем Папом, сказав: Знай, царь, что весьма вероломно поступает он (Мушег) по отношению к тебе и ждет твоей смерти" (153).

Թարգմանութեանը սխալ է Մուշեկ Մամիկոնյանի հակառակորդները աշխատում են թագաւորին համոզել, թէ նա՝ սպարապետը «մեծաւ նենգութեամբ է ընդ քեզ» և այդ հաստատելու համար. առաջ են բերում մի շարք դեպքեր, երբ Մուշեկը թագաւորի թշնամիներէց ձեռք է ձգել կոխիներէ ժամանակ, բայց դարձյալ բաց է թողել. այս իրողութեաններէ նշումով ուզում են նրանք թագաւորին համոտացնել, որ Մուշեկի կողմից նրա կյանքը վտանգի տակ է գրկած. նրանք աւելում են. «[Մուշեկ] քեզ մահու ապաստէ՛ւ. բայց մեր թարգմանիչը անհոգ կերպով թարգմանել է՝ «քո մահվան է ապաստում»: Գրաբար բնագիրը չի ասում՝ «մահուան քում ապաստէ՛ւ» (քո մահվան է ապաստում), այսինքն իբր թէ Մուշեկը ձեռնածալ ապաստում է մինչև թագաւորի մահը ինքնաբերաբար հասնի, այլ ասում է՝ «քեզ մահու ապաստէ, որը նշանակում է՝ «հետամուտ է քո մահվան», «սպառնում է քո կյանքին», «քեզ մահ է պատրաստում»: «Մահու ապաստե՛ւ»-ը կապակցութեան է, գրաբարին հասուկ արտահայտութեան, և ոչ թէ զրչական սխալ, որովհետեւ Փափաստսի մոտ քիչ հետո դարձյալ կրկնվում է, այս անգամին Պապի բերանով. «Զիարդ ասեն ցիս զայս բանս, եթէ Մուշեկ քեզ մահու ապաստէ» (199), որը նույն ձեռք թարգմանված է՝ „Как могут мне сказать, что Мушег ждет моей смерти?“ (154). Մեր թարգմանչին մոլորեցնողը եղել է Ս. Մալխասյանցը, որը թարգմանել է՝ «քո մահվան է ապաստում» (243 և 244):

Դ գլր. Օ Ե զլիսում կարգում ենք պարսից Շապուհ թագաւորի բերանով հեռեկայ խոսքերը. «Բայց Արշակ արքայ Հայոց այս երեսուն տմ է Արեաց՝ զի ետուն ընդ նմա ճակատս, և յաղթել և ոչ մի տմ ոչ կարացար» (165): Թարգմանված է՝ „Ибо царь армянский Аршак вот уже тридцать лет воюет с арийцами и ни разу мы не могли его победить“ (128).

Արքա՞ն է ճիշտ այս թարգմանութեանը: Գրաբար բնագիրը ասում է. «Որովհետեւ տնա երեսուն տարի է, որ մենք արիներս պետերազմ ենք մղում նրա՝ հայոց Արշակ թագաւորի դեմ և ոչ մի տարի մենք չկարողացանք հաղթել»: Այս բնագրի համաձայն Պարսկաստանը ագրեսիվ ու ակտիվ կրօն-վարդի գիրքումն է Հայաստանի հանդեպ, ինչպէս այդ մանրամասնութեն նկարագրված է արդեն ամբողջ կոնտեքստում, իսկ Հայաստանը կարողանում է գիմադրել այդ ագրեսիային. սուսերեն թարգմանութեանը, ընդհակառակն, Պարսկաստանին միայն կրաւորական պայքարի գերի մեջ է գնում հայերի հանդեպ, այսինքն՝ Պարսկաստանը չի հարձակվում, այլ միայն գիմադրական կոխ է մղում: Այս ազաւազումը Փափաստսի բնագրում գործածված քերականական դարձվածքի սխալ հասկացման հետեանք է. «Արշակ արքայ Հայոց»-ը ուղղական հոլով ունի, բայց նախադասութեան մեջ ենթակա չէ, ինչպէս կարծել է թարգմանիչը, այլ անուղղակի խնդիր ընդ նմա՝ իրացահայտիչը կամ պարզաբանումն է, այսինքն՝ ինքն էլ անուղղակի խնդիր է՝ բացահայտյալի հետ հոլովական անկապակցութեան մեջ. ընդհակառակն՝ «Արեաց»-ը, որ քերականական նուրբ դարձվածքի շնորհիւ արականի ձե է ստացել, ենթակա է Սա գրաբարի քերականութեան ճկուն խաղերից մեկն է, որը շփոթեցրել է մեր թարգմանչին և նա «Արշակ արքայ Հայոցը»-ը

դարձնելով ենթակա՝ խանգարել և շուտ ու մոտ է տվել նախադասությունը։ Այս սխալը ևս գալիս է Ս. Մալխասյանից (հմմտ. Մալխ. 215)։

Ընդհատելով այստեղ մեր բնագրագիտական գիտողությունները՝ պետք է ասենք, որ դեռ կարելի էր շարունակել այս կարգի գիտողությունները, բայց այսքանն էլ իրավունք է տալիս մեզ եզրակացնելու, որ Փալստոսի պատմության թարգմանիչը չի կարողացել բոլոր գեպքերում բմբռնել գրաբարի նրբությունները։ Այդ բանը պատճառ է դարձել թարգմանական վրիպումների։ Այդ բանի հետևանքով նաև Իուդանգարանի բնագրի ներկայացրած գծավորությունների առաջ ընդհանրապես բնկրկելով, նա անձնատուր է եղել ուրիշ թարգմանիչների, առանձնապես Ս. Մալխասյանին։ Նա շատ խոշոր չափերով յուրացրել է Մալխասյանի թարգմանության մեջ գոյություն ունեցող յուրահատկությունները (աղատ թարգմանության ձևեր, գրաբար տեքստում կիրառված քերականական սովորական նորմաներից տեղական շեղումներ, քերականական արտասովոր երևույթների գեպքերում նրա յուրովի մեկնարանություն արդյունքները, և այլն)։ Ուրիշ թարգմանություններից օգտվելը կարելի էր առավելություն համարել, եթե միայն Ս. Իսորգյանը նրանցից վերցրածների նկատմամբ քննադատական վերաբերմունք ունենար։

Թարգմանչի մոտ թույլ է նաև բանասիրական ջիղը։ Այստեղ անհրաժեշտ է ոչ միայն լեզվաբանության հիմունքների և հատկապես հայերեն լեզվի գիտական հիմունքների լիակատար ծանոթություն, այլև պատմության ու գրականության և հատկապես մեր պատմության ու մատենագրության ծանոթությունը, որոնց շնորհիվ հնարավոր կլինի բնագրում պատահող այս կամ այն մոլթ անցքը և կամ լեզվական դարձվածքը հասկանալ ճիշտ, կանխել այնպիսի աղավաղումներ, որպիսիներ նշեցինք վերևում։

Այս թարգմանության մեջ կան նաև ուրիշ տիպի աղավաղումներ։ Բանասերների կողմից առաջարկվել են մի շարք բնագրական սրբագրություններ Փալստոսի բնագրում։ Դրանցից կարելի է և պետք է օգտվել Փալստոսի պատմության քննական հրատարակություն պատրաստելու կամ թարգմանության ժամանակ։ Նույնիսկ թարգմանիչն ինքն էլ իրավունք ունի անելու այդպիսի սրբագրություններ և մուծելու իր թարգմանության մեջ, բայց բոլոր գեպքերում էլ պարտավոր է տեղնուտեղը նշել, թե սրբագրություն է կատարել այս կամ այն հիման վրա։ Եթե այդ չի արվում, դուրս է գալիս, որ բնագիրը գիտակցաբար աղավաղվում է։ Նման ձևով է վարվել մեր թարգմանիչը մի շարք տեղերում։ Մենք արդեն նշեցինք Փալստոսի «ամի ամի եւթն անգամ» ճիշտ ընթերցվածը առանց ծանոթագրության փոխելու փաստը։ Այսպիսի մի փաստ է նաև Փալստոսի 'Ի գլր. ԲԹ գլխում պարսկական զորքի համար գործածված «տապրիկ» (147) անունը, որ Ս. Մալխասյանը հասկանում ու թարգմանում է «տապարիստանցի» (201) և մեր թարգմանիչն էլ նրա հետևողությամբ՝ «табаристанский» (115). սակայն Ս. Մալխասյանը ծանոթագրություն է տալիս այդ մասին, իսկ Ս. Իսորգյանը բոլորովին չի մտահոգվում, որ, ծանոթագրություն չտալով, աղավաղում է Փալստոսի բնագիրը, դեռ չխոսենք այն մասին, որ «տապրիկ»-ը տապարիստանցի թարգմանելը շատ վիճելի է։ Ի դեպ՝ վիճելի է և Վ. Առաքելյանի կարծիքը, թե «տապրիկ»-ը պետք է կարդալ պատրիկ.

նախ անտեղի է Պարսկաստանում պատրիկներ փնտելը, երկրորդ՝ անախրոնիզմ է բյուզանդական այս տերմինը ետ տանել մինչև Փալստոսի ժամանակաշրջանը և երրորդ՝ աներևակայելի է, որ 900.000 պատրիկներ եղած լինեն: Մեր կարծիքով «տապրիկ»-ը պետք է համարել պահպանական *tabar* (պրսկ. *tabar*) «տապար» բառից՝ ի՞նչ մասնիկով, ինչպես է տանիկ «արագավազ» բառը *tač* «վազել» արմատից՝ նույն ի՞նչ մասնիկով. ուստի՝ տապարիկ > տապրիկ բառը պետք է նշանակի «տապարավոր»:

Աղավաղման տեսակներից մեկն է նաև անունների կազմական աղճատումը Փալստոսի մոտ հիշատակվում են «նահապետն Բագենից» և «նահապետն Հարուժենից» (104). այս անունների եզ. ուղղ. ձևը Բագեան և Հարուժեան է¹. Թարգմանիչը փոխանակ թարգմանելու «нахапет Багеанский» և «Габужеанский» թարգմանում է «Багенский» և «Гамбуженский» (82).

Այսպես նաև Բասենոյ սևո. բառի ուղղ. ձևը Բասեան է, ոչ թե Բասեն. բայց թարգմանչի մոտ գտնում ենք՝ «в сторону Басена» (112) և «епископ Басенский» (204), փոխանակ «Басена», «Басеанский» ձևերի:

Բնագրական և թարգմանական գիտողությունների հետ մենք ունենք նաև մի շարք գիտատեսխիկական գիտողություններ, որոնք թարգմանությունից զրոյան որակի հետ են կապված:

Թարգմանություն մեջ հայկական և հայերեն տերմինները պահված են. բայց ինչով բացատրել, որ առան տերմինը, որ մի քանի տեղ պահված է՝ аван (8 և այլն), ուրիշ տեղերում թարգմանված է местечко (18, 168, 177), деревня (32) և посад (85, 86, 92): Տակառապետ-ը չի պահվել և թարգմանվել է виночерпий (121). Այսպես և ուրիշ տերմիններ:

Թարգմանիչն անտես է արել լեզվական մի կարևոր խնդիր, որն սկզբունքային նշանակություն ունի. Ի՞նչ սխառնում է տառադարձված հայկական անուններն ու տերմինները, բայց չի՞ն արտասանություն, թե նոր: Թող խոսեն փաստերը:

Հին եա երկրորրաոր տառադարձվել է երեք ձևով՝ ևа կամ еа կամ я. օրինակ՝ միենույն եկեղեաց անունը՝ Еке.пнац (168), Еке.леац (202) և Еке.ляц (89). այսպես նաև երեւալ—Еревеал (109), Փառաւազեան—Пар[н]а-вазеан (162), Համազասպեան—Амазаспян (186), և այլն:

Թարգմանիչը եա երկրորրաոր տառադարձելու մի 4-րդ ձև ևս ունի, այն է՝ йа. դայեակ—дайак (215). բայց այսպես չի տառադարձել Հմայեակ-ը Амаяк (185): Այստեղ դուրս ունենք ալեա բարդ երկրորրաորի հետ, որը պետք է արտահայտվի айеа ձևով: Պետք է ուղղել նաև Հմայեակ-ի առաջին վանկում թույլ արված ալլանդակությունը և դարձնել՝ Гмайеак.

Գայիանէ անվան մեջ այիա-ն երեք վանկ է, ուստի՝ պիտի լիներ ոչ թե Гаяне (31), այլ Гайнәне.

Հայերեն այ երկրորրաոր լինում է ай. օր. Саур—Тайк (39). բայց ինչու Տաճար—Մայրի-ն Тачар-манри (17):

Հայերեն և տառադարձությունների մեջ տառադարձվել է ր կամ х, բայց ճաշակի: Այդ, տսենք, հասկանալի է. բայց ինչ տակ, երբ միենույն անունը տարրեր ձևերով է գրվում. օր. Շահակ-ը Шахак (37, 38) և Ша-ак (203), Վահան-ը Ваган (16) և Ваан (213):

¹ Կամ Համբուժեան, տես՝ «Պատմություն երջանիկ վարույն և մահուան երանիկ առնաստուծոյ սրբոյն մեծին Ներսէսի» (Կ. Պոլիս, 1737), էջ 32:

Եվ վերջապես դ տառի տառադարձումը կատարվել է երբեմն Դ-ով կամ Խ-ով և երբեմն Լ-ով. այսպես՝ Մուշեղ—Мушег (132 և այլն), Վաղինակ—Вагинак (19, 191), և մյուս կողմից Աղճնիք—Алдзник (19 և այլն), Կողթ—Колт (162). բայց երբեմն նաև միևնույն անունը երկու ձևերով՝ Դարաճաղի—ն Даранали (8 և այլն) և Даранаги (112), Բնաբեղ—ը Бнабел (28) և Бнабех (159), Եղջերք—ը Елджерк (193) և Ехджерк (223). այսպես և ուրիշներ:

Ե՛րբ է գործածվում մեծատառը և երբ փոքրատառը. մեր թարգմասիչը չի կարող ասել, Սնապասիկ բաղմաթիվ օրինակներից միայն մի քանիսը. Ժողովուրդների անուններից՝ Албаны (162) և каспы (անգ), տերմիսներից՝ Амбаракапет (122) և андердзапет (անգ), հատուկ անուններից կերաված ածականներից՝ князь Алдзникский (19) և бзнуникский нахапет (17): Այսպես և ուրիշներ:

Մի քանի խոսք թարգմանչի կազմած գիտական ապարատի մասին:

Էջ 23-ի № 18 ծանոթագրությունը խոսում է հայկական спарапет և зоравар տերմիսների մասին, սակայն մինչև այդ բնագրում արգեն մի քանի անգամ խոսք է լինում սպարապետության և զորավարության մասին և առաջին անգամ՝ 10-րդ էջում, հետևաբար ծանոթագրությունը պետք էր տալ այնպե՛ս: Էջ 56-ի танутэр բառին է վերաբերում № 47 ծանոթագրությունը, որը խոսում է տօր և танутэр տերմիսների մասին, սակայն այդ ծանոթագրությունը պետք է տեղափոխվեր 43-րդ էջի վրա, որտեղ առաջին անգամ գործ է ածված танутэр տերմիսը: Այսպես նաև 45-րդ էջում № 38 ծանոթագրությունը տրվել է Сатаռ անվան վրա, բայց պետք է այդ տրվեր 15-րդ էջում նույն անվան վրա: 156-րդ էջի № 78 ծանոթագրությունը, որ տրված է Глак անվան վրա, պետք է տեղափոխվեր 150-րդ էջի վրա: Հատուկ անունների և տերմիսների վերաբերյալ որոշ ծանոթագրություններ թարգմանիչը սկսել է նշանակել հենց գլուխների ցանկերի վրա (տես № № 3, 4 և 5 ծանոթագրությունները 5-րդ և 6-րդ էջերում), բայց աշխատության բնթացքում միշտ այդպես չի արել և, պետք է ասել, ճիշտ էլ չէ այդ: Ծանոթագրությունները պետք է տալ բնագրի մեջ և ոչ թե ցանկերի վրա: Հարկ էր նաև ոչ հայ բնթերցողի համար բոլոր անծանոթ հատուկ անուններին տալ ծանոթագրություններ:

Ահա սրանք են Բուզանդարանի ուսանողների թարգմանության վերաբերող մեր գիտողությունները, որոնց համար մենք բնարել ենք միայն սակավ օրինակներ:

Մենք այս հրատարակության մոտեցանք բնագրի հարադատության և նրա գիտական որակի հետ կապված խնդիրների տեսանկյունից: Պետք է ավելացնենք, որ բնագրի հարադատության հարցում, մեր կարծիքով, պատասխանատու է նաև գրքի խմբագրությունը, նկատի ունենալով, մանավանդ, որ նշանակված է եղել հատուկ խմբագիր, որի միակ պարտականությունը եղել է համեմատել թարգմանությունը գրաբար բնագրի հետ և ստուգել նրա հարադատությունը: Բայց ինչո՞ւ գնահատել տեքստարան-խմբագրի կատարած աշխատանքը, որը մի շարք դեպքեր խոսում են այն մասին, որ թարգմանությունը հաճախ գրաբար բնագրի ամենապարզ, ամենահասկանալի մասերում իսկ շեղվում է բնագրից: Տառադարձության խնդրում՝ նկատվում է, որ խմբագրությունը, աշխատելով հնի և նորի անհետևորդականության դեպքերը մի կերպ հաշտեցնել, անունների ցանկում

նշել է հինն ու նորը միասին, ինչպես և տերմինների ցանկում մտցրել է ուղիղ ձևերը, բայց դա չի օգնել տառադարձության բաղմատեղականությանը:

Մեր գիտությունների նպատակն է ոչ թե թերագնահատել այս հրատարակության արժեքն ու նշանակությունը, այլ օգնել, որպեսզի նրա երկրորդ հրատարակությունը և «Հայկական հին գրականության հուշարձաններ» մատենաշարի հաջորդ հատորները զերծ մնան նման կարգի թերություններից: